

ճահիճներ չորցնելու դործը պետական օրկաններուն, որոնք ունին անհրաժեշտ փորձառութիւնը, որոշ ծրագիր և արհեստագիտական կազմ:

Մալարիայի ախտաբանութիւնը ներկայիս այնքան զարգացած է որ, անոր դէմ պայքարի համար նոր հետազոտութիւններու պէտք չկայ Կ. Խ. համար: Այդ՝ Տրոպիկական հաստատութեան դործն է և միայն խաղաղ և յարատեւ հետազոտութեան նիւթ: Կ. Խաչը իր բոլոր ուժերը պէտք է տրամադրէ միայն անմիջական խնամքներու:

Այս դործին համար միակ ձեռնահաս մարմինն է Կ. Խ. ը որ իր կարճատե անցեալով հաստատեց թէ տեղեակ է ժողովրդի ցաւերուն, դիտէ անոնց դէմ կոռւելու դիտական և գործնական ուղիները, և իրեն վստահուած կոպէկներով կրնայ խոչոր արդիւնքներ տալ:

Մենք վստահ ենք որ հայութիւնը արժանապէս պիտի վարձատրէ այդ բեղմնաւոր աշխատանքը:

ԲԺ. Ե. ՄԻՆԱՍԵԱՆՑ

ԽՆԱՄԵՑԷՔ ԶԵՐ ԱԿՈՒԱՆԵՐԸ

Առաւօտ և երեկոյ ձեր ահուաները լուացէ՛ք և վրձինով մաքրեցէ՛ք: Անհրաժեշտ չէ տտամնափոխի ունենալ, պարզ օճառը կը բաւէ:

Ձեր ամսական տտամնափրձինը ունեցէ՛ք և թոյլ մի տաք որ ուրիշներ, նոյնիսկ ձեր ընտանիքի անդամները գործածեն զանոնք:

Մի չափազանցէ՛ք թթու ըմպելիներու, ինչպէս նաև անուշեղէններու և չաքարեղէններու գործածութիւնը մանաւանդ փոքրիկներու համար: անոնց արտադրած թթուն շուտով կը մաշեցնէ ահուան և կ'աղաղացնէ փառմը:

Պաղ ըմպելի խմելէ անմիջապէս ետք շատ տաք, և փոխադարձաբար տաք ըմպելիէ ետք շատ պաղ ըմպելի մի՛ խմէք: Մի՛ չափազանցէ՛ք ոգելից ըմպելիներու ինչպէս նաև ծխախոտի գործածութիւնը, եթէ կուզէ՛ք որ ձեր շուշը չհոտի և ձեր ահուանները ճերմակ ու փայլուն մնան:

Ահուաներով կարծր առարկաներ (մատիտ, զբիշ, փայտ, կայլն) կամ անուշեղէններ (կաղին, ընկոյզ, կորիզ կայլն) մի կտրէք: Մի՛ կտրէք նաև գէրձան, անոնց ծայրը չփճացնելու համար:

Մի՛ թողուք որ ահուաներու միջև երկարատե մնան սննդեղենի մնացորդները, որպէս զի չնեխին և փտութիւն չպատճառեն, անմիջապէս մաքրեցէ՛ք զանոնք ոչ թէ սրածայր առարկաներով (գնդասեղ, լուցիկ կայլն) այլ շուրով և օճառով:

Մի մոռնաք որ ահուաներու հիւանդագին վիճակը բերնի, ստամոքսի և այլ զանազան հիւանդութիւններու պատճառ կը դառնայ, և մի՛ սպասէ՛ք որ ձեր ահուանները ցաւին տտամնաբոյսին դիմելու համար, այլ իբր կանխազգուշութիւն տարին մէկ կամ երկու անգամ քննութեան ենթարկել տուէ՛ք զանոնք:

Չսկեցէ՛ք ձեր զաւակներուն ահուաներուն վրայ և փոքր հասակէն (երեք տարեկանէն) վարժեցուցէ՛ք զանոնք խնամելու իրենց ահուանները այնպէս ինչպէս որ դուք:

ԱՐԱՄ ԳԻԹԱՊԵՅԱՆ